Գեղարքունիքի մարզ ք. Գավառ Ազատությա 2
հեռ: +(374264) 2 23 29 e-mail:haferdgas@mai ս

«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ Գեղարքունիքի մարզի, քաղ. Վարդենիս , Վ. Համբարձումյան փող. 05-005-0179-0028 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված ավտոտնակի տեխնիկական վիճակի ,ինքնակամ իրականացված դրա երկրորդ հարկի, կից տեղակայված հարևան խանութի շենքին կից իրականացված երկու աստիճանահարթակների (տեղակայված են դիտարկվող հողամասում) և ավտոտնակի բակային ճակատից ինքնակամ իրականացված արտաքին աստիճանային համակարգի վերաբերյալ**

«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ

Գեղարքունիքի մարզ ք. Գավառ Ազատության 2
հեռ: +(374264) 2 23 29 e-mail:haferdgas@mail.ru

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ՀՀ Գեղարքունիքի մարզի, քաղ. Վարդենիս , Վ. Համբարձումյան փող. 05-005-0179-0028 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված ավտոտնակի տեխնիկական վիճակի ,ինքնակամ իրականացված դրա երկրորդ հարկի, կից տեղակայված հարևան խանութի շենքին կից իրականացված երկու աստիճանահարթակների (տեղակայված են դիտարկվող հողամասում) և ավտոտնակի բակային ճակատից ինքնակամ իրականացված արտաքին աստիճանային համակարգի վերաբերյալ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ՝
ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ
ՏՆՕՐԵՆ՝ Թ. ԳԱՓՈՅԱՆ

Գավառ 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

**13651**
(լիցենզիայի համարը)

ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
(գործունեության տեսակը)

Տրված է «29 դեկտեմբերի 2009թ.» « ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ, 378630, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ք. ԳԱՎԱՌ,
(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունն ու բնակության վայրը)
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
(ստորագրություն)
Կ.Տ.

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
(անուն, ազգանուն)

«Հաստատում եմ»

«Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ

Տնօրեն Թ. Գափոյան

«__» «______» 2024թ.

**Եզրակացություն**

**ՀՀ Գեղարքունիքի մարզի, քաղ. Վարդենիս , Վ. Համբարձումյան փող. 05-005-0179-0028 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված ավտոտնակի տեխնիկական վիճակի ,ինքնակամ իրականացված դրա երկրորդ հարկի, կից տեղակայված հարևան խանութի շենքին կից իրականացված երկու աստիճանահարթակների (տեղակայված են դիտարկվող հողամասում) և ավտոտնակի բակային ճակատից ինքնակամ իրականացված արտաքին աստիճանային համակարգի վերաբերյալ**

Աշխատանքը կատարվել է նշված հողամասի սեփականատեր (սեփ. Վկ. N403202) Երանուհի Մարտիրոսյանի առ 23.02. 2024թ. դիմումի համաձայն:

Տեխնիկական հետազննության շրջանակներում կատարվել է նշված հողամասում տեղակայված շենք-շինությունների ակնադիտական ուսումնասիրություն:

Հետազննությունը իրականացվել է << Երկրաշարժադիմացկուն շինարարություն, նախագծման նորմեր>> ՀՀՇՆ 20.04-2020, <<Շենքերի ու կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում .Հիմնական դրույթներ >> ,ՀՀՇՆ 20-06-2014- նորմերի և <<Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ >>-ի համաձայն:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի համաձայն դիտարկվող շենքի տարածքը գտնվում է առաջին սեյսմիկ գոտում, որտեղ սահմանված առավելագույն հորիզոնական արագացումը Amax=0.3g (ՀՀՇՆ 20.04-2020,ըստ հավելամաս 1-ի):

Չննվող ավտոտնակը փոքր թեքությամբ տեղանքի վրա տեղակայված , հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով ,մոտ 9.6x12.0մ արտաքին եզրաչափերով ,երկու հարկանի առանձին կառույց է (նկ1) :




Նկ. 1 Ավտոտնակի ներկայիս տեսքը

Կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական ու լայնական պատերով և միջհարկային ծածկերով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնով:

Պատերն իրականացված են տուֆաքարի երկշերտ շարվածքով, միաձույլ երկաթբետոնե միջուկներով ու գոտիներով:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Կառույցի ծածկն իրականացված է հավաքովի երկաթբետոնե կողավոր սալերով, իսկ վերնածածկը՝ հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, պողպատե թիթեղից ծածկույթով:

Կառույցը երկրորդ հարկի միջին տեղամասում , գլխավոր ճակատի կողմից ունի խորշապատշգամբ:

Կառույցն ի սկզբանե միահարկ եր և 2021 թվականին <<Սուրո-Օսկանի >> ՍՊԸ-ի կողմից կատարվել են հետևյալ վերակառուցման աշխատանքներ՝

-Իրականացվել է երկրորդ հարկը, գոյություն ունեցողին նման կոնստրուկտիվ համակարգով:

-Կառույցի առաջին հարկում իրականացվել են մեկ դռան և մեկ պատուհանի բացվածքներ:

-Կառույցի երկրորդ հարկի ֆունկցիոնալ կապն ապահովելու համար , բակային ճակատից իրագործվել է պողպատե տարրերից սանդղաբազուկներով և միածույլ երկաթբետոնե հարթակով արտաքին աստիճանային համակարգ (նկ2) :




Նկ.2 Արտաքին աստիճանային համակարգի տեսքը

-Կառույցի գլխավոր ճակատի աջ հատվածամասին կից հարևանությամբ գտնվող խանութի շենքի ընդլայնված հատվածամասին կից իրականացվել է արտաքին աստիճան – հարթակ – թեքահարթակներ համակարգ ,որը տեղակայված է դիտարկվող հողակտորում (նկ3):




Նկ.3 Արտաքին աստիճան- հարթակ-թեքահարթակներ-համակարգի տեսքը

-Կառույցի բակային ճակատի ձախ հատվածամասին կից հարևանությամբ գտնվող խանութի շենքի ընդլայնված հատվածամասին կից իրականացվել է արտաքին հարթակ-թեքահարթակ համակարգ (նկ 4):




Նկ.4 Արտաքին հարթակ –թեքահարթակ  համակարգի տեսք

Զննմամբ պարզվեց հետևյալը

- Կառույցի կրող կոնստրուկցիաները չունեն որևէ նշանակալից ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են լավ տեխնիկական վիճակում:
- Կառույցը գտնվում է ավարտուն վիճակում և դրա շինարարական աշխատանքները կատարվել են պատշաճ որակով, գործող շիննորմերին համապատասխան:
- Կառույցի առաջին հարկում ինքնակամ իրականացված դռան և լուսամուտի բացվածքները իրագործվել են ընդունված ձևակարգով ,պատշաճ որակով:
- Կառույցի արտաքին աստիճանային համակարգը հարևան խանութի շենքի ընդլայնված հատվածամասին կից, հողամասում տեղակայված արտաքին աստիճան – հարթակ - թեքահարթակներ և արտաքին – թեքահարթակ համակարգերը իրականացվել են պատշաճ որակով և դրանք գտնվում են լավ տեխնիկական վիճակում:

Ելնելով հետազննության արդյունքներից կառույցի տեխնիկական վիճակը գնահատվում է լավ, իսկ վնասվածության մակարդակը , ըստ գործող ՀՀՇՆ 20.04- նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է առաջին աստիճան:

Հաշվի առնելով վերը նշվածը եզրակացվում է՝

-ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Վարդենիս , Վ.Համբարձումյան փող. 05-005-0179-0028 կադաստրային ծածկագրով հողամասում տեղակայված կառույցը պիտանի է բնականոն և անվտանգ շահագործման համար և այն չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք , դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը , դրանից վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

-Կառույցի արտաքին աստիճանային համակարգը, հարևան խանութի շենքի ընդլայնված հատվածամասին կից, դիտարկվող հողամասում տեղակայված արտաքին աստիճան-հարթակ-թեքահարթակներ և արտաքին հարթակ-թեքահարթակ համակրգերը պիտանի են բնականոն և անվտանգ շահագործման համար:

մասնագետ Ռ. Խաչատրյան